ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՆ ՍԱՖԱՐՅԱՆ
Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԱԶԵՎԱՉԱՓԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Խորհրդային և հետխորհրդային գիտաբանական ավանդույթում «ժանր» հասկացությունը բնորոշվում է որպես «արվեստի բոլոր տեսակներում պատմականորեն ձևավորված ներքին ստորաբաժանում»[1]: Գրականության տեսության մեջ ժանրի բացահայտման համար անհրաժեշտ են դիտարկվում հետևյալ գործոնները՝ «կոնկրետ գրական տեսակին պատկանելիությունը», «գեղագիտական որակի գերակայությունը», «ստեղծագործության ծավալը և ընդհանուր կառուցվածքը»[2]: Միաժամանակ արդեն որոշ խորհրդային տեսաբաններ ընդգծում էին ժանրերի՝ փոխադարձ անցումների բնութագրերը և դասակարգման բազմազանությունը, անգամ փաստում էին «ժանրային տարբերակման հնացած լինելն ընդհանրապես», եղել են նույնիսկ ժանրերի հիմնահարցը օրակարգից հանելու փորձեր[3]: Այլ հետազոտողներ էլ կարծում էին, որ ժանրային որոշակիության հերքման փորձերը բնորոշ են գեթ մոդեռնիստական գեղագիտությանը,

---

[1] Տե՛ս Жанр *художественный* // Большая советская энциклопедия, третье издание, том 9, Москва, изд. “Советская энциклопедия”, 1972, стр. 121: Տես և հմմտ. նաև ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանի հեղինակած համապատասխան հանրագիտարանային հոդվածը՝ Ժանր // Հայկական Սովետական Հանրագիտարան, հատ.4, Երևան, 1978, էջ 281:

[2] Տե՛ս Жанр *литературный* // Краткая литературная энциклопедия, том 2, Москва, изд. “Советская энциклопедия”, 1964, стр. 914-915, Жанр *литературный* // Литературный энциклопедический словарь, Москва, изд. “Советская энциклопедия”, 1987, стр. 106-107.

[3] Տե՛ս Жанр *художественный* // Большая советская энциклопедия, третье издание, том 9, Москва, изд. “Советская энциклопедия”, 1972, стр. 121.

«արևմտյան վեպի քայքայման» առանձին դրսևորումների և չեն տարածվում համաշխարհային գրականության վրա[4]:

Լրագրության տեսության մեջ «լրագրային ժանր» հասկացությունն ընկալվում է որպես «հրապարակման/ստեղծագործության կայուն տեսակ՝ միավորված բովանդակային-ֆորմալ սկզբունքներով»[5]: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տ. Դ. Օրլովան նշում է, որ «ժանրը հանդես է գալիս որպես բովանդակության ֆորմալիզացիայի տարր՝ ընդգծելով թեմատիկ ուղվածությունը և գեղագիտական կոլորիտը»[6]:

Ավանդաբար հետխորհրդային լրագրության տեսաբանների աշխատություններում առանձնացվում է ժանրերի եռաստիճան դասակարգում (այն կոչվում է նաև «մոսկովյան» կամ «խորհրդային»)՝ «տեղեկատվական», «վերլուծական» և «գեղարվեստական-հրապարակախոսական» ժանրեր[7]: Գոյություն ունի նաև լրագրողական ժանրերի՝ հինգ խմբի բաժանում. «օպերատիվ-տեղեկատվական», «օպերատիվ-հետազոտական», «հետազոտական-լրատվական», «հետա-

[4] Տե՛ս Жанр *литературный* // Краткая литературная энциклопедия, том 2, Москва, изд. “Советская энциклопедия”, 1964, стр. 917, Жанр *литературный* // Литературный энциклопедический словарь, Москва, изд. “Советская энциклопедия”, 1987, стр. 107.

[5] Տե՛ս և հմմտ. Тертычный А. А., Жанры периодической печати: учеб. пособие, Москва, Аспект Пресс, 2000, стр. 12, Черникова, Е. В., Основы творческой деятельности журналиста: учеб. пособие, Москва, 2005, стр. 56, Орлова Т. Д., Феномен развития жанров в контексте журналистики нашего времени // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 29, Երիցյան Ս. Ս., Հեռուստահաղորդում. Մտահղացումից մինչև եթեր (Հեռուստալրագրության տեսության և պրակտիկայի հարցեր), Երևան, Էդիթ Պրինտ, 2007, էջ 67-321:

[6] Орлова Т. Д., Феномен развития жанров в контексте журналистики нашего времени // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 38.

[7] Մասնավորապես տե՛ս Дмитровский А. Л., Жанры журналистики // Ученые записки Орловского государственного университета. Серия: Гуманитарные и социальные науки, номер 4 (60), 2014, стр. 149-158, Орлова Т. Д., Феномен развития жанров в контексте журналистики нашего времени // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 28-39.

զոտական» և «հետազոտական-պատկերավոր»[8]: Սույն պրոբլեմատիկայի հետազոտող Լ. Կրոյչիկի կողմից առաջարկված՝ երկրորդ համակարգը (այս համակարգումհոդված, նամակ և տեսություն ժանրերը համարվում են «հետազոտական», հարցազրույց, ռեպորտաժ, հաշվետվություն ժանրերը՝ «օպերատիվ-հետազոտական», իսկթղթակցություն, մեկնաբանություն և գրախոսություն ժանրերը՝ «հետազոտական-լրատվական»), բախվում է «հետազոտական» ժանրի հասկացության ծավալի սահմանագծման հիմնահարցին: Մինչդեռ ավանդական եռաստիճան համակարգում «տեղեկատվական» ժանրերից են «վավերագրությունը», «տեսությունը», «նոթերը» (առանձնացվում է «ճամփորդական նոթերի» ժանրը), «ռեպորտաժը», «հարցազրույցը», «հաշվետվությունը», որպես «հետազոտական» են բնորոշվում «հոդվածը», «գրախոսությունը», «տեսությունը», «թղթակցությունը», «մեկնաբանությունը», իսկ «գեղարվեստական-հրապարակախոսականների» թվում են ակնարկը, ֆեյլետոնը(թերթոն), պամֆլետը(պարսավագիր), էսսեն և այլն: Այս դասակարգման համակարգը քննադատության է ենթարկվել, մասնավորապես, պրոֆեսոր Վ. Տ. Տրետյակովի կողմից՝ «զուտ լրագրության» դիրքերից: Հիմնավորելով քննադատությունը այն դրույթով, որ թերթերում տպագրվող կամ հեռուստատեսությամբ հեռարձակվող ամեն ինչ լրագրություն չէ, նա առանձնացնում է լրագրության չորս ժանր՝ տեղեկատվություն, ռեպորտաժ, հարցազրույց և հոդված (միաժամանակ հետազոտողը իրավացիորեն ընդգծում է, որ առաջին երեք ժանրերը լայն իմաստով հանդիսանում են «տեղեկատվական ժանրեր», ինչը, մեր կարծիքով, ինչ-որ չափով բարդացնում է «տեղեկատվություն» հասկացության (որպես լրագրության ժանր) ծավալի սահմանազատումը. Իմա «տեղեկատվական ժանր» և «տեղեկատվություն» ժանրի հասկացությունների տարանջատումը)[9]: Վ. Տրետյակովը դիտարկում է պամֆլետիև ֆեյլե-

[8] Տե՛ս Кройчик Л. Е., Система журналистских жанров // Основы творческой деятельности журналиста: Учебник для студентов вузов по специально сти «Журналистика» / Ред.-сост. С. Г. Корконосенко, Спб., 2000, стр. 125-167, Орлова Т. Д., Феномен развития жанров в контексте журналистики нашего времени // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 28-39.

[9] Տե՛ս Третьяков В.Т., Как стать знаменитым журналистом: Курс лекций по теории и практике современной русской журналистики, Москва, 2004, стр. 263-264.

տոնի ժանրերը իբրև «հրապարակախոսական հոդվածի» տարատեսակներ, իսկ տեսությունը, զրույցը, մեկնաբանությունը որպես «ռեպորտաժների և հարցազրույցների նախապատրաստության մեթոդիկաների օգտագործման հանրագումար»[10]:

Գիտական գրականության մեջ բացի ժանրերի դասակարգման «բովանդակային-ֆորմալ» հիմունքից առաջարկվում են նաև «կոմունիկատիվ» և «ոճաբանական» մոտեցումները: Հետաքրքիր են, կարծում ենք, նաև ամերիկյան մշակութաբան Ջ. Գ. Քավելտիի դատողությունները, վերջինս առաջարկել է ներմուծել «ֆորմուլային ժանրերի» հասկացությունը (որպես «ֆորմուլաներ» են ընկալվում մասնավորապես ճամփորդությունը, քրեական պատմությունները և այլն)[11]:

Վերջին տասնամյակների ընթացքում գիտնականներն առավել հաճախ են խոսում լրագրողական (մասնավորապես գեղարվեստական-հրապարակախոսական խմբի) ժանրերի տրանսֆորմացիայի կամ նույնիսկ «վերացման» մասին: Պրոֆեսոր Տ. Օրլովան ընդգծում է, որ «բազմաժանրությունը գնահատվում էր որպես տպագիր պարբերականի արժանիք .... Երբ նախկինում խմբագրությունում արարում էին թերթի համարը, ենթադրում էին նրանում տարատեսակ ժանրերի առկայությունը», իսկ «այսօր տպագիր մամուլի էջերից անհետացել են ֆեյլետոնը և պամֆլետը .... Ձևավորվում է տեղեկատվական լրագրության հզոր սեկտոր, որը նպատակաուղված է փաստերի և հաղորդագրությունների տարածմանը .... Տեղեկատվական ժանրերը փաստացի օկուպացրել են ամբողջ թերթային տարածքը՝ էապես դուրս մղելով վերլուծական ժանրերը .... որպես բացառություն մնացել է կոնկրետ հանձնարարությունը՝ «վերցնել հարցազ-

[10] Տե՛ս նույն տեղումէջ 265-268, ինչպես նաև Дмитровский А. Л., Жанры журналистики // Ученые записки Орловского государственного университета. Серия: Гуманитарные и социальные науки, номер 4 (60), 2014, стр. 150.

[11] Մանրամասն տե՛ս Дмитровский А. Л., Жанры журналистики // Ученые записки Орловского государственного университета. Серия: Гуманитарные и социальные науки, номер 4 (60), 2014, стр. 151, Орлова Т. Д., Феномен развития жанров в контексте журналистики нашего времени // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 32.

րույց»»[12]: Մեր կարծիքով վերոգրյալը նախևառաջ պայմանավորված է ԶԼՄ-ների «ինտերնետիզացիայի», «կոնվերգենցիայի» (տեղեկատվության տարածման տարբեր միջոցների մերձեցման և միահյուսման) և «մուլտիմեդիականացման» (որի անքակտելի մասն է հանդիսանում «ինտերակտիվությունը») օբյեկտիվ գործընթացներով, որոնք հանգեցնում են տեղեկատվության փոխանցման այնպեսի նոր ձևերի առաջացմանը, որոնցում տեղի են ունենում ավանդական ժանրերի և ժամանակակից տեխնոլոգիաների միահյուսում, յուրօրինակ ժանրային փոխակերպումներ:

Պրոֆեսոր Տ. Օրլովան անգամ շեշտել է, որ «ժամանակակից լրագրության տեսաբանները չեն շարադրել և ոչ մի գիտական աշխատություն, որն առանձնանար կոնցեպտուալ ամբողջականությամբ, նշանակալի մասշտաբայնությամբ, հիմնարարությամբ՝ ժանրային տրանսֆորմացիաների հետազոտման բնագավառում»[13]:

«Լրագրության ժանրերի» հիմնահարցերի շրջանակը լուսաբանող գիտական գրականության մեջ առկա տարաձայնությունը, մեր կարծիքով, պայմանավորված է նաև լրագրության՝ որպես մարդկային գործունեության ոլորտի գործառույթների և բուն դերի տարընթերցմամբ, ինչպես նաև ժանրերի ձևավորման հատկանիշների մասին համընդհանուր կարծիքի բացակայությամբ: Ինչպես նշում է Ա. Լ. Դմիտրովսկին, Լ. Կրոյչիկի դասակարգման հիմքում «ընկած է լրագրության՝ որպես առավելապես «տեղեկացնող» հասարակական ինստիտուտի մասին պատկերացումը», իսկ համաձայն պրոֆեսոր Ս. Մ. Վինոգրադովայի կարծիքի «լրագրության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն, և, հետևաբար, նրանք, ովքեր աշխատում են ԶԼՄ-ներում, ակտիվորեն մասնակցում են սոցիոմշակութային ստեղծագործական կյանքում .... Լրագրողի գերխնդիրն է մշակույթի տարրերի փոփոխությունն ու զարգացումը, նրա արժեքայինինորմատիվ կոորդինատների ստեղծումը և սոցիալական

[12] Орлова Т. Д., Феномен развития жанров в контексте журналистики нашего времени // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 28.

[13] Նույն տեղում, էջ 29:

գործընթացների «մշակութային համալրումը»»[14]:

«Ժանրային խառնաշփոթի» ձևավորված իրավիճակն է՛լ ավելի է սրվել, երբ գիտական գրականության մեջ ի հայտ է եկել «ձևաչափ» («ֆորմատ») եզրույթը, որն երբեմն օգտագործվում է որպես «ժանրի» հոմանիշ և ի լրումն «նոր մուլտիմեդիային ժանրերի» բարդացնում է լրագրության ժանրերի սահմանման գործընթացը (որոշ գիտնականներ այսօր թվարկում են մոտ չորս հարյուր ժանրեր)[15]: Տ. Օրլովան, կարծում ենք, ճշմարտացիորեն է ընդգծել, որ «ձևաչափ» հասկացության հիմքում ընկած են գեթ ֆորմալ բնութագրեր: Կարծում ենք, լրագրողական ձևաչափերը ձևավորվում են հենց ժանրային միահյուսումների արդյունքում կամ տարբեր ժանրերի հատման տիրույթում՝ ի հավելումն ձևաչափաստեղծ տեխնոլոգիական նորարարությունների: Տարբեր «ձևաչափերում» կարող են «գոյակցել» տարբեր ժանրերի տարրեր (հավելենք, ճիշտ այնպես, ինչպես և ժանրային դասակարգում չստացածնյութը, ինչն էլ իր հերթին է «վտանգում» լրագրողի ստեղծագործության ֆենոմենի «դասականությունը»):

ԶԼՄ-ների մուլտիմեդիականացման գործընթացում մասնագետներն առանձնացրել են մի շարք «սինթեթիկ» ժանրեր՝ «աուդիոսլայդ-շոու», «ինտերակտիվ վիդեոսյունակ», «մուլտիմեդիային թոք-շոու», «ինտերակտիվ վիդեոկամուրջ», «-մուլտիսկրիպտ», «ինֆորմատիվ խաղեր» («ինտերակտիվ ինֆոթեյթմնթ»), «ինֆոգրաֆիկա», «լոնգրիդ» և այլն[16]: “its-journalist.ru” կայքում ներկայացված է Ա. Բուրդինայի՝ «Ինչ է մուլտիմեդիային լրագրությունը. Հասկացություն, տիպաբանություն, առանձնահատկություններ» վերնագրված (ռուսե-

[14] Տե՛ս և հմմտ. Дмитровский А. Л., Жанры журналистики // Ученые записки Орловского государственного университета. Серия: Гуманитарные и социальные науки, номер 4 (60), 2014, стр. 151, Виноградова С.М. Слагаемые журналистской профессии // Основы творческой деятельности журналиста, СПб., Знание, 2000, стр. 27.

[15] Մանրամասն տե՛ս Орлова Т. Д., Феномен развития жанров в контексте журналистики нашего времени // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 30,33.

[16] Մասնավորապես տե՛ս Н. Лосева, Синтетические жанры мультимедиа // Журналистика и конвергенция: почему и как традиционные СМИ превращаются в мультимедийные; под ред. А.Г. Качкаевой, Москва, 2010, стр. 129-154.

րեն) հոդվածը, որտեղ հեղինակը մուլտիմեդիային ժանրերի թվին է դասում նաև «ստատիկ նկարազարդումը», «ֆոտոռեպորտաժը», «փոդքասթը», «տեքստի աուդիոտարբերակը», «հոսքային վիդեոն կամ ուղիղ եթերը» և այլն[17]: Այստեղ, կարծում ենք, հիշարժան է նաև Ա. Վ. Կոլիսնիչենկոյի դիրքորոշումը, նա (չնայած այն իրողությանը, որ նույնպես դիտարկում է «լոնգրիդը» որպես լրագրության յուրահատուկ ժանր) իր ուսումնասիրություններից մեկում գրում է. «Մուլտիմեդիային բաղկացուցիչը ժանրային բնութագիր չի հանդիսանում, քանզի մուլտիմեդիային միջոցների օգտագործմամբ կարելի է մատուցել ցանկացած ժանրի տեքստ»[18]:

Կարծում ենք հարկ է անդրադառնալ այնպիսի միժամանակակից սոցիալական ֆենոմենի ի հայտ գալու և տարածվելու հարցին, ինչպիսին է «բլոգոսֆերան» (հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ որոշ ուսումնասիրողներ հենց «բլոգն» են առանձնացնում որպես մուլտիմեդիայի միակ նոր ժանր[19]): Վերջին տարիներին գիտական գրականության մեջ ծավալվել է «բլոգոսֆերայի» և ավանդական ԶԼՄ-ների փոխհարաբերությունների շուրջ հետաքրքիր բանավեճ: Ուսումնասիրողներից ոմանք ընկալում են բլոգերների գործունեությունը որպես «քաղաքացիական լրագրություն» (նման դիրքորոշումը հատկապես տարածում է գտել Արևմուտքում, մասնավորապես ԱՄՆ-ում), ոմանք էլ կարծում են, որ բլոգերները չեն կարող ունենալ «լրագրողի կոչման» հավակնություն[20]: Ի ջատագովություն երկրորդ դիրքորոշման հիմնա-

[17] Տե՛ս А. Бурдина, Что такое мультимедийная журналистика: понятие, типология, особенности https://its-journalist.ru/articles/chto-takoe-multimedijnaya-zhurnalistika-ponyatie-tipologiya-osobennosti.html#i-2 (дата обращения: 07.11.2021).

[18] Колисниченко А. В., Длинные тексты (лонгриды) в современной российской прессе, http://www.mediascope.ru/1691 (дата обращения: 07.11.2021).

[19] Տե՛ս Журналистика и конвергенция: почему и как традиционные СМИ превращаются в мультимедийные; под ред. А.Г. Качкаевой, Москва, 2010, стр. 129.

[20] Մասնավորապես տե՛ս Экгардт Л. В., Блоггерство – гражданская журналистика или слухи? // Вестник ВГУ, Серия: Филология, Журналистика, 2010, №2, стр. 220-223, Филатова О. Г., Блоги и СМИ, гражданская и тра-

վորման բազմաթիվ հետխորհրդային հետազոտողներ վկայակոչում են բլոգերների՝ «մասնագիտական պատասխանատվության» բացակայության գործոնը՝ հակակշռելով այն վերոհիշյալի առկայությամբ «ավանդական ԶԼՄ-ների լրագրողների» շրջանում (հատկանշական է, որ այս հիմնավորման հետևողական կողմնակիցներից է նաև ռուսաստանյան ճանաչված լրագրող Վ. Պոզները[21]): Նշենք նաև, որ այսպիսի «պատասխանատվության բացակայությունը» (ինչը հաճախ պայմանավորվում է խմբագրության առաջ պարտա- վ ո - ր ություններ ի բացակայությամբ և ներխմբագրական համաձայնեցման ընթացակարգերը շրջանցելով, ինչն էլ, իր հերթին ընկալվում է որպես նյութերի հրապարակման արագությունը խթանող գործոն) շատ հետազոտողներ դիտարկում են նաև որպես առավելություն: Դեռ տասը տարի առաջ համապատասխան հրապարակումներում գերիշխում էր այն հիմնավորումը, որ բլոգերները իրենց գործունեության համար աշխատավարձ չեն ստանում, և, հետևաբար, «բլոգերությունը» չէր կարող դասվել մասնագիտությունների շարքին, սակայն իրավիճակն էապես փոխվեց նույն տասնամյակի երկրորդ կեսի ընթացքում (ինչը պայմանավորված էր ոլորտի «մոնետիզացիայի» տարաբնույթ հնարավորությունների ի հայտ գալով)[22]: Չնայած այն հանգամանքին, որ տարբեր ա-

диционная журналистика: соотношение понятий // Вестник СПбГУ, Сер. 9, 2010, Вып. 4, стр. 281-287, Мелешевич Р. И., Работа современного блогера: самопрезентация и консьюмеризм // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 147-153, Савенков В. Д., Функции блогосферы в РФ и США в XXI веке: сходства и различия // Социодинамика, 2018, 3, 2018, стр. 16-26.

[21] Մանրամասն տե՛ս Почему блогер – не журналист https://rg.ru/2016/03/15/vladimir-pozner-u-blogera-net-nikakoj-otvetstvennosti-za-tekst.html, Познер отказался ставить журналистов и блогеров в один ряд https://lenta.ru/news/2016/03/17/pozner_blogers/, Познер раскрыл секрет: почему телеведущий не станет блогером и не откроет YouTube-канал https://ru.armeniasputnik.am/20200923/Pozner-raskryl-sekret-pochemu-televeduschiy-ne-stanet-blogerom-i-ne-otkroet-YouTube-kanal-24564472.html, Владимир Познер – о долге, ответственности, свободе и волеhttps://pozneronline.ru/2021/01/31185/ (дата обращения: 07.11.2021).

[22] Տե՛ս և հմմտ. Экгардт Л. В., Блоггерство – гражданская журналистика или слухи? // Вестник ВГУ, Серия: Филология, Журналистика, 2010, №2,

րևմտյան երկրներում (մասնավորապես՝ ԱՄՆ-ում) «բլոգոսֆերան» հավասարեցված է ՁԼՄ-ներին՝ դիտարկվելով որպես քաղաքացիական լրագրության զարգացման հիմնական հարթակ, արևմտյան որոշտեսաբաններ նույնպես «բլոգոսֆերայի» ներկայացուցիչներին չեն համարում ավանդական լրագրողներ[23]: Միանշանակ է գեթ բլոգի՝ որպես տեղեկատվության տարածման և հաղորդակցման նոր միջոցի ընկալումը (էութենական հատկանիշներ են դիտվում հետադարձ կապի բարձր ցուցիչը, փոխանցվող տեղեկատվության յուրահատուկ բնույթը և բարձր արագությունը): Բլոգերի և ՁԼՄ-ների փոխազդեցությունների համատեքստում Օ. Գ. Ֆիլատովան առանձնացրել է երեք հիմնարար գործոն: Առաջինը ավանդական ՁԼՄ-ների կողմից բլոգերների տրամադրած տեղեկատվության օգտագործումն է: Երկրորդը կոնկրետ հրատարակության կայացման ու զարգացման համար բլոգոսֆերայի օգտագործման հնարավորությունն է: Փոխազդեցության երրորդ միջոցը պայմանականորեն անվանվել է «խմբագրական բլոգինգ»՝ նկատի առնելով ավանդական ՁԼՄ-ների կայքերում տեղադրված այն տեղեկատվությունը, որը

стр. 220, Мелешевич Р. И., Работа современного блогера: самопрезента ция и консьюмеризм // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 150-151.

[23] Մանրամասն տե՛ս Экгардт Л. В., Блоггерство – гражданская журналистика или слухи? // Вестник ВГУ, Серия: Филология, Журналистика, 2010, №2, стр. 222, Филатова О. Г., Блоги и СМИ, гражданская и традиционная журналистика: соотношение понятий // Вестник СПбГУ, Сер. 9, 2010, Вып. 4, стр. 283.Ավանդական լրագրության համակարգում «քաղաքացիական լրագրության» դերի ընկալման համատեքստում, մեր կարծիքով, հետաքրքիր է Խորհրդային մեծ հանրագիտարանի համապատասխան բառահոդվածի այն հատվածը, որը նվիրված է հիշյալ ոլորտի զարգացմանը: Այստեղ նշվում է, որ «ժամանակակից» լրագրության մեջ հսկայական դեր էր խաղում «կամավոր օգնականների»՝ բանվորական, գյուղացիական, զինվորական թղթակիցների և այլոց «բազմամիլիոնանոց բանակը»: Ընդլայնվում էր լրագրության ոլորտի հասարակական հիմունքներով աշխատակիցների և խմբագրությունների արտահաստիքային անդամների՝ գիտության, մշակույթի գործիչների, ժողովրդական տնտեսության բոլոր ոլորտների աշխատակիցների շրջանը, նրանց համար լրագրությունը դառնում էր«երկրորդ մասնագիտություն, հասարակական ակտիվության դրսևորման ձև»: Տե՛ս Журналистика // Большая советская энциклопедия, третье издание, том 9, Москва, изд. “Советская энциклопедия”, 1972, стр. 252.

ստեղծվում է տվյալ լրատվամիջոցի լրագրողների կողմից, բայց ներկայացվում է բլոգի ձևաչափով: Կարծում ենք, վերոհիշյալ միջոցն ավելի արդարացի կլիներ կոչել «խմբագրվող բլոգինգ» (հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրագրողի գործունեությունը վերահսկվում է խմբագրության կողմից, ինչն էլ շեշտադրել է Օ. Ֆիլատովան), թեև, տվյալ փոխազդեցության միջոցի կոնկրետ օրինակները քննելիս բացահայտվում են «հեղինակային սյունակի» ֆենոմենի հետ զուգահեռները: Վերջին տարիներին ձևավորվել է տեսակետ, ըստ որի հենց ավանդական ԶԼՄ-ների լրագրողների «հեղինակային սյունակներում» (վերջիններիս դիրքը ժամանակակից ժանռային համակարգում նույնպես սուր վեճեր հարուցող թեմա է) են «հնչում» հրապարակախոսական ժանրերի արձագանքները[24]: Այլ ուսումնասիրողներ դիտարկում են հրապարակախոսական ժանրերի դրսևորումները «լոնգրիդի» ձևաչափում և պնդում են, որ համացանցային միջավայրը և մուլտիմեդիային գործիքակազմը ստեղծում են նոր հնարավորություններ հրապարակախոսության համար[25]: Կարծում ենք նաև, որ կարևոր է հրապարակախոսական ժանրերի ավանդույթների պահպանումը հետխորհրդային տարածքում, քանզի ի տարբերություն ԶԼՄ-ների արևմտաեվրոպական մոդելի նախկին Խորհրդային Միության երկրներում հրապարակախոսությանը հատկացվել է որոշիչ դեր հասարակական կարծիքի ձևավորման գործընթացում:

Արևմտյան ավանդույթը կարևորում է լրագրողական ժանրերի բաժանումը «լուրերի» և «կարծիքների»[26], բայց առավել տարածված է լրագրության դասակարգումը ոչ թե ըստ ձևի (ֆորմալ), այլ ըստ բովանդակային (առարկայական) հատկանիշների և տեղեկատվության տարածման միջոցի,

[24] Մասնավորապես տե՛ս Саянова Н. В., Публицистика в эпоху конвергентных СМИ // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 42-45, Королев И. А., Научная полемика об определении места колонки в современной системе жанров // Мультимедийная журналистика: сб. науч. трудов, Минск, БГУ, 2018, стр. 317-321.

[25] Տե՛ս Зубко Д. В., Медиа в интернете: новые возможности для публицистики // Международный научно-исследовательский журнал, № 11 (65), Часть 2, стр. 21-25.

[26] Մանրամասն տե՛ս Байчик А. В., Курышева Ю. В., Литвиненко А. А., Информационные жанры в России и за рубежом: Творческий практикум. Ч. 1. — СПб.:С.-Петерб. гос. ун-т, 2016, стр.7.

այսպես առանձնացվում են «հետաքննական լրագրությունը», «սպորտային լրագրությունը», «քաղաքական լրագրությունը», «օնլայն լրագրությունը» և այլն[27]:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ չնայած մուլտիմեդիականացման ծավալման գործընթացում էլ ավելիսրվող՝լրագրության ժանրերիդասակարգման հարցում առկա մեթոդաբանական տարաձայնություններին ու տարընթերցումներին, ակնհայտ է, որ լրագրությունը գտնվում է ժանրերի և լրագրողական ձևաչափերի ձևավորման գործընթացի նոր փուլում, իսկ տեսաբանները փորձում են(համապատասխան գործիքակազմ ձևավորելով) օբյեկտիվ գործընթացները ռեֆլեքսիայի ենթարկել ոչ թե պարզապես ժանրային, այլ ժանրաձևաչափային տեսանկյունից:

ARMAN SAFARYAN - FEATURES OF THE GENRE-FORMAT CLASSIFICATION OF JOURNALISM IN THE ERA OF MULTIMEDIA TRANSFORMATIONS: The article deals with different models of journalistic genres classification. Over the past years, researchers have increasingly talked about the transformation and “disappearance” of journalistic genres (especially, the artistic and journalistic group), which is associated with the objective processes of media “internetization”, “convergence” and “multimediaization”. It is proposed to consider the disagreements in the scientific literature around the problems of “journalistic genres” through the prism of “genre-format perception”, taking into consideration the discrepancies of the role and functions of journalism as a sphere of human activity and the fact that there is no consensus about genre-forming characteristics. The situation with “genre confusion” is aggravated by the appearance in the scientific literature of the“synthetic genre”, “multimedia genre” and “format” concepts (the latter concept is sometimes used as a synonym for the term “genre”). The article also presents an attempt to analyze the phenomenon of the “blogosphere” (considering that some researchers call “blog” the only new multimedia genre).

Key words: genre classification of journalism, media multimediaization, format, blogosphere, multimedia genres, blog, genre-forming features.

---

[27] Մասնավորապեստե՛ս Diksha Nautiyal, Types Of Journalism – Which Is Right For You https://www.collegedekho.com/articles/types-of-journalism/, 9 Types Of Journalism To Explore https://www.indeed.com/career-advice/career-development/types-of-journalism (датаобращения: 07.11.2021).

АРМАН САФАРЯН - ОСОБЕННОСТИ ЖАНРО-ФОРМАТНОЙ КЛАССИФИКАЦИИ ЖУРНАЛИСТИКИ В ЭПОХУ МУЛЬТИМЕДИЙНЫХ ТРАНСФОРМАЦИЙ: В статье рассматриваются разные модели классификации журналистских жанров. На протяжении последних лет исследователи все чаще говорят о трансформации и “исчезновении” журналистских жанров(в частности художественно-публицистической группы), что связано с объективными процессами “интернетизации”, “конвергенции” и “мультимедизации” СМИ. Предлагается рассматривать разногласия в научной литературе вокруг проблематики “журналистских жанров”через призму “жанро-форматного восприятия”, учитывая разночтения роли и функций журналистики как сферы человеческой деятельности и факт отсутствия единого мнения по поводу жанрообразующих признаков.Ситуация с “жанровой путаницей” усугубляется с появлением в научной литературе понятий “синтетический жанр”, “мультимедийный жанр” и “формат” (последнее понятие иногда используется как синоним термину “жанр”). В статье также представлена попытка анализа феномена “блогосферы” (учитывая, что некоторые исследователи называют “блог” единственным новым мультимедийным жанром).

Ключевые слова: жанровая классификация журналистики, мультимедизация СМИ, формат, блогосфера, мультимедийные жанры, блог, жанрообразующие признаки.